

ՀՈՍ - ՀՈՆ
ՄԻՇՏ ՌՈՒՄԲԵՐ
Կ'ԻՅՆԱՆ

ՄԱԱՍԹՐԻԻԽԹ

- ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՇԻՆՔ -

ՀՀՇ-Ի ԿՈԶԸՐ՝
ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԵԼՈՒ

Սեպտեմբեր 8-ին, Երեքշաբթի առտու մեր առած լուրերու համաձայն սահմանափակ շրջանները խախուտ խաղաղութիւն մը կը տիրէր, բայց նախորդ երկու օրերուն ալ ուժեղացող շարունակուած էին եւ հոս-հոն դոճեր, վիրաւորներ եւ աւերներ կային:

Հաղորդի շրջանի Տող եւ Էղիլու զիւղերու ուժեղացումներէն կային աւերներ եւ վիրաւորներ: Նոյնն էր պարսկական Մարտունիի շրջանի Կարմիր Շուկայ աւանին:

Աղբրեջանական զօրքը փորձած էր եւ կը շարունակէ փորձել յառաջանալ նաեւ Մարտունիի շրջանի Մաճկալաչէն եւ ճարտար զիւղերու ուղղութեամբ: Հայկական ինքնապաշտպանութեան ուժերը յաջողած էին ետ մղել: Հայկական ուժերը ունին 5 մեռեալ եւ 17 վիրաւոր, Ասկերանի շրջանն ալ մղուած կռիւներէն երկու հայ երիտասարդ եւս զոհ գացած է եւ ութ ուրիշներ ալ վիրաւորուած են: Թշնամին ունի զգալի կորուստներ: Մարտակերտի շրջանը, հակադարձակման անցնելով, հայկական ինքնապաշտպանութեան ուժերը ետ առած են Կճղուտ զիւղը:

Բուռն ուժեղացումներ կատարուած են մանաւանդ Տառնչի շրջանը, ուր չորս բնակիչ մեռած է, տասը՝ վիրաւորուած: Քարուքանդ կղած են տասը տուն եւ քսան ուրիշներ ալ մասամբ:

Սեպտեմբեր 7-ի տուեալներով, ուժերը կ'իյնան Վայք, Կասպանի եւ Սիւնիքի վրայ: Մէկ վիրաւոր կայ: Ռուսները կ'իյնան նաեւ Երասխ, Արմաշ, մէկ վիրաւոր կայ եւ մէկ տուն աւերուած է:

**

Հոռմի նախապատրաստական (Մինսկի) նոր անպաշտօն- ժողովին մասնակցելու համար Հոռմ մեկնած են Հայաստանէն Սուրէն Զոյեան, Մատթէոս Տէր-Մանուէլեան (Հիւսիսային Ամերիկայի բաժնի վարիչ), Քրիսթիան Տէր-Ստեփանեան, Ղարաբաղի մնայուն ներկայացուցիչը Երեւան՝ Մանուէլ Սարգսեան, Խաչիկ Պէգիբճեան, իսկ Ղարաբաղէն՝ Բորիս Առուշանեան (տեղակալ), Հրանտ Խաչատրեան եւ իրաւագէտ՝ Եուրի Բարսեղով:

**

Երեւանի մէջ Հայոց Համազգային Շարժումը կոչ քրած է հայ ժողովուրդին, որ Արցախի այս օրհասական օրերուն անտեսէ քաղաքական ու զաղափարական տարակարծութիւնները եւ լարէ բոլոր ուժերը ու զինուորագրուի Արցախի ինքնապաշտպանութեան սրբազան գործին: «Միմիայն, կ'ըսէ կոչը, հայ ժողովուրդի բոլոր մարտունակ ուժերու աջակցութեամբ է որ Ղարաբաղի Հանրապետութեան նորակազմ բանակը կրնայ ջախջախիչ պատասխան տալ քշնամիին, իսկ յաղթանակի հիմքը նախ եւ առաջ հայրենիքի փրկութեան համար մարտնչելու պատրաստ զինուորն է, որու կարիքը կը զգայ, այսօր, ամէնէն առեւի նուիրական Արցախը: ՀՀՇ-ի վարչութիւնը կոչ կ'ընէ արցախցիներուն եւ հայրենի հողի համար կռու-

Մեծն-Բրիտանիոյ նախարարապետը յայտարարեց թէ Պրանսայի մերժումը, Սեպտեմբեր 20-ին, պարզապէս դաշինքին մահը պիտի նշանակէր: Եւրոպայի ապագային նուիրուած ժողովին բացման իր ելոյթին մէջ է որ ձոն Մէյճըր շեշտեց նաեւ որ դաշինքը ի զօրու չի կրնար ըլլալ եւ զործադրելի առանց 12-ներու հաւանութեան: Մընաց որ, Յունիս 2-էն ի վեր, երբ Դանիա մերժեց, 11 Պետութիւն մնացած է եւ արդէն 3 ամիս առաջ ըսուեցաւ թէ այդ դաշնադիրը այլեւս չէր գոյնացել, անվաւեր է, բայց ոմանք ըսին ու անցան ու ցայսօր իրաւական գեանի վրայ ոչ ոք կրցաւ վրձնական բան մը ըսել այդ մասին: Դաշնադրին է՞ր յօդուածին Բ. պարբերութեան մէջ կ'ըսուի սակայն. «ներկայ դաշնագիրը գործադրութեան կը դրուի 1993 Յունուար 1-ին, պայմանաւ որ վաւերացման բոլոր տաւալները յանձնուած ըլլան, կամ հակառակ պարագային, այդ մեակերպութեան վերջինը դիմող ստորագրեալ Պետութեան վաւերացման բուզքը յանձնուելուն յաջորդող ամսուան առաջին օրը»: Ուրեմն՝ անհրաժեշտ է 12 ըլլալ:

Ինչպէս կը տեսնուի, մասնաւոր բարդ նախադասութիւններ շարուած են նոյնիսկ պարզ բաներ ըսելու համար եւ այդ է արդէն պատճառը, որ ամէն մարդ կրնայ իր ուզած ձեւով «կարդալ» եւ մանաւանդ՝ մեկնարանել: Այս է արդէն որ կը գործադրուի ներկայիս Միթերանէն ժխաբար, Շիրաք եւ Պառ (այո), Շրվէնրմանէն Փասքուա, Մառչէ եւ Լը Փէն (ոչ) «բընութեան դէմ» դրացնութիւններ ներկայացընելով ժողովուրդի մը, որ եթէ ինք ձեռնարկէ դաշնադրին ընթերցումին ոչինչ կրնայ հասկնալ: Հասարակ մահկանացուին կը մնայ վստահիլ իր հոսանքը ներկայացնող քաղաքական դէմքին, այլ խօսքով Խորհրդարանը կը բաւէր, բնապէտք չկար այս իրարանցումին, ոչ բարոյապէս, ոչ ալ՝ նիւթապէս:

Օրէ օր աւելի հող կը շահի այն տեսակետը թէ պէտք է «սրբազրուի» այս դաշնագիրը, կրկին բանակցութեան դրուի: «Այո»ի կողմնակիցները կ'ըսեն անկարելի է, բայց, զիտակից են թէ լաւ կ'ըլլայ, որովհետեւ ամէն բան ճիշդ չէ: Եւ արդէն, հոս ալ հակասութիւն մը կայ: Հանրավճիռ մը (ոեփերանտով) հարցում մըն է մէկ հարցի շուրջ, որու այո՛ կամ ո՛չ կ'ըսուի, մինչ հոս կան հարիւրաւոր յօդուածներ, ու կը ծեծուին բազմատեսակ հարցեր: Ոմանց կարելի է այո՛ ըսել, ուրիշներու ո՛չ: Նոր պատճառ մը որ հանրավճիռին հակասութիւնը կրկին բացայայտուի:

լու պատրաստ իւրաքանչիւր հայ քաղաքացիի ներկայանալ գորահաւաքի նորատեղծ շտապ, իսկ Հայաստան գործող բոլոր հանրային - քաղաքական կազմակերպութիւններուն միանալ կոչին եւ իրենց ունեցած հնարաւորութիւններով աջակցիլ հրգորացնելու համար Արցախի պաշտպանութիւնը»:

Որքան ալ ուզենք խուսափիլ դառն խորհրդածութիւններէ Հայաստանի վերաբերող հարցերուն, կարելի չէ առնուազն չզարմանալ նման կոչէ մը: Օգոստոս 21-ի մեր թիւով կ'արձայանդէինք Օգոստոս 18-ի կառավարական նիստին, ուր քննար-